քանի որ նա պէտք է երթայ իր հայրենիքը և եթէ պէտք լինի այդ բանի համար մեռնել, կը մեռնի (ծափահարութիւն)։

Յ. ԲՈՒԴԱՂԵԱՆ. — Կարդում է դաշնակցական Ֆրակցիայի առաջարկած բանաձևը։

— Բանաձևն ընդունւում է 37 ձայնով 5-ի ձեռնպահութեամբ։

Աւագ քարտուղարը կարդում է ցանկը ստացած բազմաթիւ շնորհաւորական հեռագիրների։

Նիստը փակւում է ցերեկւայ ժամը 3-ին։

ՈՒԹՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՆԻՍՏ

(30 ապրիլի)

Նախագահում է Ա. Սահակեանը, քարտուղարը կարդում է նոր ստացած գործերը։

Նախարարապետի զեկուցումը

Նախարարապետ Ա. Խատիսեանը. — Այսօր պատիւ ունեմ զեկուցելու վերջին երեք շաբաթւայ ընթացքում տեղի ունեցած դէպքերի մասին։

Սան Ռէմօի խորհրդաժողովը ապրիլ 28-ին վերջացրել է իր աշխատանքները. դժբախտաբար, կայացած վճիռների մասին մենք դեռ տեղեկութիւն չունենք. հատ ու կտոր ստացած լուրերը արդէն հրապարակւած են մամուլում, այնպէս որ ես կանգ չեմ առնի դրա վրա ու կը զեկուցեմ մինչև այդ խորհրդաժողովը կատարւած աշխատանքների մասին։

Հայաստանի հարցը. — Մարտ ամսւայ ընթացքին Լոնդոնում տեղի են ունեցել Գերագոյն Խորհրդին փոխարինող և խորհրդակցական բնոյթ կրող՝ դաշնակից պետութեանց ներկայացուցիչների ժողովները. յատուկ մի մասնաժողով զբաղւել է Հայաստանի հարցով և յատկապէս քննութեան է առել երեք խնդիր՝ սահմանների, դէպի ծով ելք ունենալու և Հայաստանի սահմաններում ապրող ժողովուրդների փոխյարաբերութեանց խնդիրները։ Բացատրութիւններ տւել են Ա. Ահարոնեան, Գ. Նուազար, մէկ անդամ հրաւիրւած է եղել Զաւէն պատրիարքը, իսկ գօր. Ղորղանեանը, որպէս զօրական ներկայացուցիչ, մասնակցել է բոլոր նիստերին։ Դժւար է ասել, թէ վերջնականապէս ինչ վճիռ է կայացել, սակայն, առայժմ պարզ է, որ Հայաստանի սահմանների մէջ են մտնում Վանի վիլայէթն առանց Հէքեարիի, Բիթլիսի վիլայէթը, Մշոյ սանջակը, Էրզրումի վիլայէթը. Տրապիզոնի վիլայէթի վերաբերմամբ վերջնական տեսակէտ դեռ չի մշակւած։ Եթէ մասնաժողովի վճիռը հաստատւի Սան Ռէմօում, տարա Հայաստանը կունենայ 220,000 քառ. վերստ տարածութիւն։

Դէպի ծով ելք ունենալու խնդրի վերաբերմամբ կայ երկու տեսակէտ. առաջինի կարծիքով Հայաստանի կենսունակութեան համար անհրաժեշտ է սեփական ելքը, երկրորդն, ընդհակառակը, պնդում է, որ նա Բաթումից կարող է օգտւել։

Երրորդ խնդրի վերաբերմամբ մանրամասն զեկուցում է տւել Ա. Ահարոնեան՝ նկարագրելով Հայաստանի ժողովուրդների փոխյարաբերու-